1. Ցուցակ ծննդեան եւ մկրտութեան իմոյ„: Ծնեալ եմ 'ի քաղաքն քութայիս 1760 օգոս". 6, յուղղափառ ծնողաց, եւ մկրտեալ յառաքելական միսիօնարէ 'ի տէր յովհաննիսէ խօչայով:

2. Վկայութիւն քահանայութեան եւ արխիմանտրիտութեան„: Ստացեալ եմ 'ի պօլիս 1790 յուղղափառ իգնատիոս արքեպսէն՝ որ 'ի կոնսիստորի 1797 'ի փետր" 13. Nr. 89 գրեալ երեւի:

3. Հրաման թոյլտուութեան գալոյ 'ի ռուսաստան„: Ըստ խնդրանաց մօզդօքու ժղվդ՝ եւ հրամանաւ անտօնիոսի արքեպսի փռանչիսկոս ֆռաքիայ՝ եկի 'ի մօզդոկ 1792. յունվ". 20:

4. Օրինակ երդման„: 'Ի տերութէ տուեալ խստրուքցիային 1792 յապրիլի 3 Nr. 272 յայտնի՝ եղէ մշտնջենական հպատակ նորին կայսերական մեծութեան:

5. Վկայութի վն գործածելոյ զհոգեւորական պաշտօն„: 'Ի կողմն ասիոյ եղէ առաքելական միսիօնար, եւ 'ի կողմն ռուսաց ամս 8 եղէ հոգեւոր կառավարիչ ամտէրխանու, եւ բոլոր ուղղափառ բնակչացն կովկասու՝ եւ ձեր տուեալ վկայութն յայտ է:

6. Հրամանագիր ելանելոյ 'ի ռուսաց„: Ըստ խնդրանաց իմոց՝ հրաման եղեւ 'ի կոնսիստորէ՝ 1797 'ի փետր". 15. Nr. 89 յորժամ կամիցիմ կարող եղէց գնալ յերկիրն մեր: Եւ 1810 ընդ եփրեմայ պատրիարգին գնացի յերկիրն արարատու, որ է տեղի ուխտի ու երկրպգութ:

7. եւ 8. Վկայական գիր վն կանոնաւորապէս յառաջանալոյ յեպսութ„՝ եւ վկայական գիր վն ձեռնադրութեան եպսութ եւ արքեպսութ„: ըստ խնդրանաց ղարսայ եւ ախլցխայ բոլոր հոգեւորականաց եւ մարմնաւորականաց 1815 'ի մայիսի 9 եփրեմ պատրիարգ արար զիս եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս:

9. Վերահաշտութի քո ընդ առաքելական աթոռոյ„: Յայտնի է 'ի լիբանան եղեալ գրիգոր պատրիարգէն:

10. Հրաման եւ թուղթ գալոյ 'ի ռուսաստան„: 'Ի պօլիս հոգեւորականաց ընտրողութ եւ գերապայծառ